№ 51 Մարտի 27 (Ապրիլի 8) 1880 Մարտի 27 (Ապրիլի 8) № 51

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ «Разсвѣтъ» շաբաթագիրը հայերի մասին։ Նամակ Երևանից։ Նամակ Գօրուց։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։ — Բանասիրական։ Խենթը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„РАЗСВѢТЪ“ ՇԱԲԱԹԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Անցեալ 1879 թուին սկսեց հրատարակվել Ս. Պետերբուրգում «Разсвѣтъ» շաբաթագիրը, որ Ռուսաստանի հրէաների օրգան է։

Ներկայ 1880 թուին № 10 մէջ «Разсвѣтъ» տալել է հետևեալ ուշադրութեան արժանի առաջնորդող յօդուածը հայերի մասին։

«Դօկտոր Գրիգոր Արծրունի, «Մշակ» լրագրի խմբագիրը, Թիֆլիսում կարդացված իր հրապարակական դասախօսութեան մէջ հետևեալ միտք է յայտնում։ «Ոչ մի ազգ չը կայ աշխարհիս երեսին, որ մի ժամանակ հալածելիս չը լինէր հրէաներին,—իսկ հայերը իրանց քաղաքական անկախութեան ժամանակ, հրէաների բազմաթիւ գաղթականներին իրանց հետացած հպատակների հետ կատարելապէս հաւասար քաղաքական իրաւունքներ էին տուած։ Հայերը աշխարհիս երեսին քրիստոնէական վարդապետութիւնը ընդունող առաջին ազգ էին, բայց մի և նոյն ժամանակ նրանք երկրագնտիս վրա միակ ազգ էին, որ երբէք չը հալածեցին հրէաներին։ Այդ էր պատճառը որ Հայաստանի հրէաների մեծ մասը հայերի հետ ձուլվեցան։ (Մշակ № 74, 1879 թուի)։

«Առանց քննութեան տակ դցելու, թէ որքան ուղիղ են դօկտոր Արծրունու յայտնած մտքերը անցեալի վերաբերութեամբ, մենք դատելով մի քանի փաստերի վրա, որոնց մեզ հաղորդում է մեր Թիֆլիսի թղթակիցը, և նոյնպէս ուրիշ տեղեկութիւնների վրա հիմնվելով, կարող ենք ներկայի, այսինքն հրէաների հայոց այժմեան հրատարակութեան մէջ ունեցած դիրքի վերաբերութեամբ, անպայման ճիշդ համարել այդ մտքերը։

«Վերջին ժամանակները Կովկասում քրիստոնեայ ազգաբնակութեան կողմից հրէաների դէմ պատահած անհամբերողութեան ցոյցերի տխուր շարքի մէջ, մենք երբէք չը տեսանք հայերին, որպէս գործող անձանց։ Այդ մխիթարական երևոյթը շատ հեշտ է բացատրվում նախ և առաջ հայերի ու հրէաների պատմական վիճակի մի քանի ընդհանրական կողմերով։ Սեփական ցաւերը միշտ յարուցանում են համակրութիւն դէպի ուրիշի ցաւերը։ Դարերի երկարատև շարքում, այն ժամանակից, երբ հայոց ազգը կորցրեց իր անկախութիւնը և դադարեց զոյութիւն ունենալ, որպէս քաղաքական առանձին մարմին, նրանց համար վիճակը, ինչպէս և հրէաների համար, մի տեսակ խորթ մայր էր։

«Մի և նոյն ժամանակ հայերը, իրանց յատուկ ցեղական արատներին զծերի և հակումների կողմից, շատ նմանութիւններ ունեն հրէաների հետ, որ և առիթ տուեց նոր ազդագրողներին և հնագէտներին վերաբերել նրանց ծագումը ոչ թէ իրանական ցեղին, որպէս այդ մինչև այժմ ընդունված էր, այլ սեմական ցեղին։ Իրանք հայերը չեն հերքում մի տեսակ նմանութիւն իրանց և հրէաների մէջ։ Եթէ սորան աւելացնենք որ հայերը, լինելով կատարեալ տիրապետողները կովկասեան վաճառականոցի վրա, աչքի առջև ունելով երկրի մէջ բնակվող համեմատաբար սակաւաթիւ հրէաներին, մինչև այժմ առիթ ունեցած չեն երկիւղ կրել հրէաների մրցութենից վաճառականութեան և արդիւնաբերութեան ասպարիզում, և ուրեմն պատճառ ունեցած չեն դժգոհ լինել հրէաներից և թշնամական կերպով վերաբերվել նրանց, նախանձել նրանց, — մենք կատարելապէս կը հասկանանք ինչի հայերը համակրական կերպով են վերաբերվում դէպի հրէաները և մինչև անգամ հրաժարվում են հասկանալուց, թէ ինչ պատճառով, իսկապէս, պէտք է հալածել հրէաներին։ Զանազանութիւնը հայերի և կովկասեան այլ քրիստոնէական ազգերի հայեացքների մէջ հրէաների վրա մանաւանդ շատ պարզ յայտնվեցաւ Քութայիսի վերջին գործի ժամանակ։ Մինչև որ շատերը կովկասեան քրիստոնեայ ուրիշ ազգերից միաձայն կրկնում էին որ հրէաների մէջ մի առանձ կայ, որ գործ է ածում քրիստոնեաների արիւնը, հայերը, ընդհակառակն, զարմանում էին, ինչպէ՞ս մարդիկ կարող են այդ տեսակ ծայրայեղութեանը հասնել, մի այդպիսի անմտութեան հաւատալու համար։ Հայեացքների այդ զանազանութիւնը յայտնվում է և տեղական մամուլի մէջ։ Հայոց լեզուով հրատարակվող լրագիրներում, գրեթէ երբէք չէ երևում հրէաների ազգային զգացմունք վիրաւորող մի բան, նոյնպէս և առիթ չէ եղել որ նրանք մի հրէայից գործված յանցանքը վերաբերէին բոլոր հրէաներին, առանց բացառութեան։ Այդ բաւական չէ. հայոց լրագրութիւնը շատ զգոյշ կերպով վերաբերվում է դէպի այն փաստերի արտաքին ոչ մի օրինաւոր վարժապետ։ Մեզ մօտ էր թատրոնը, որ միանգամ գոնէ դուրս չը բերեց իր բեմի վրա հայաստանցու թշուառ պատկերը, և կերակրում էր հասարակութիւնը ֆրանսիական խոհանոցի աղտեղութիւններով։ Մեզ մօտ էին ազգի պետերը, որ չողոքրթում էին Դրան կամայականութիւնները և իրանց համար փառք էին դիզում։ Մեզ մօտ էր նիւթական ուժը—արծաթը,— որ ամիրաների պալատներն էր միայն զարդարում և հայաստանցու բարօրութեան համար մի փարայ անգամ չէր ծախսվում։—Մի խօսքով, մենք մեր ձեռքում բռնած ունէինք ազգի յառաջադիմութեան զեկը, կարծես, մի չար մտքով նրան մոլորեցնելու և դէպի կորուստ տանելու համար...։

—Ես, առաջ տարաւ նա,—իմ և իմ մի քանի համախոհների դիտաւորութիւնը կատարեալ դօնքիշօտութիւն եմ համարում։ Ի՞նչ կարելի է սպասել։ Ամբողջ ժամանակներ նստել Պոլսում բոլորովին անգործ, չը թեթևացնել Հայաստանի կեանքը, չուսումնասիրել երկիրը, չը ծանօթանալ ժողովրդի պէտքերի և պահանջների հետ, չը նախապատրաստել նրան մի լաւ ապագայի համար,—և յանկարծ յայտնվել նրա մէջ, նրա ձեռքը զէնք տալ, որ կռւէ իր անձնապաշտպանութեան համար,—դա հաղիւ թէ կարող էր ընդունելութիւն գտնել։ Այսուամենայնիւ, ես չեմ վհատում, իմ հաւատը բնաւ չէ խախտվում, ես և դուցէ իմ բոլոր համախոհներս կընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ կը բացանէ մեր հետևողների առջև. նրանք կանցնեն մեր դիակների վրայով...։

Վերջին խօսքերը լսելու ժամանակ Վարդանը չը կարողացաւ զսպել իր սրտի զեղմունքը, նա դրկեց պ. Դուդուկչեանին և համբուրեց նրան, ասելով.

—Այսպիսի գործը, այո՛, զոհ է պահանջում... փառք և պատիւ նրան, ով որ կը լինի առաջին զոհը...։

Գիշերի կէսից անցել էր արդէն։ Օդայի մէջ քնելու անկողինները վաղուց պատրաստ էին։ Բայց երկու երիտասարդները երկար մնացին անքուն։ Պ. Դուդուկչեանը կրիտիկական անխնայ քննադատութեամբ խօսում էր Կ. Պոլսի ցնորամիտ երիտասարդութեան վրա, խօսում էր տպարդիւն եկեղեցականների վրա, ասելով,—«Եթէ այդ երկրում գտնված վանքերի և եկեղեցիների տասնից մէկ մասի փոխարէն օրինաւոր դպրոցներ լինէին, այժմ Հայաստանը փրկված կը լինէր»։

Ցանկարծ օդայի դուռը մեղմիկ կերպով զարկեցին։ Վարդանը դնաց և բաց արեց։ Ցայտնվեցան Հայրապետը և Ապօն, երկու եղբայրներ, որ որոշվում էին ծերունի Խաչօի միւս որդիներից իրանց բոլոր յատկութիւններով։

—Մենք այսպէս տարաժամ կերպով եկանք ձեզ մօտ, որ չը նկատեն մեզ, ասաց Հայրապետը իր եղբօր հետ նստելով։—Երևի, անհանգստացրինք ձեզ։

—Ամենևին, պատասխանեց Վարդանը,—մենք քնել չը կարողացանք, դեռ խօսում էինք։ Երևի, ձեր տանը բոլորը քնած են։

—Բոլորը, պատասխանեց Ապօն,—միայն հայրս անքուն էր և իր անկողնի մէջ անդադար հաղում էր։ Երբ նա հաղում է, կը նշանակէ, մի բանի վրա մտածում է։

Վարդանը և պ. Դուդուկչեանը իսկոյն նկատեցին, որ երկու եղբայրների այդ անագան պահուն իրանց մօտ գալը առանց նպատակի չէր լինելու, և սպասում էին, մինչև նրանք կը յայտնէին իրանց խորհուրդը։

—Մենք մեր հօր և միւս եղբայրների մօտ ոչինչ խօսել չը կարողացանք, ասաց Հայրապետը լուրջ կերպով,—և այս պատճառով չտապեցինք ձեզ յայտնել, որ մենք բոլորովին համակրում ենք ձեր մտքերին և ամեն կերպով պատրաստ ենք ծառայելու ձեր նպատակներին, ինչ գործում որ յարմար կը համարէք։

Պ. Դուդուկչեանի սառն դէմքի վրա փայլեց ուրախութեան պայծառ մի նշոյլ. դա միսիոնարի ուրախութիւն էր, երբ երկու հաւատացեալ է ձեռք բերում և մտածում է, թէ իր հօտը արդէն կազմված է, թէ այդ երկուսը սկիզբ կը դնեն հազարների։

—Բոլորովին սխալ է մտածել, խօսեց Հայրապետը,—թէ այստեղի հայերը հոգով, սրտով և ամեն բարձր ձգտումներով մեռած են։ Բայց մի բան կայ, որ հայերի ընդհանուր թերութիւն է։ Ամեն մի հայ, առանձին վեր առած, զգոյշ է, մտածող է, անվստահ է և սեպհական կամք չունի։ Նա միշտ սպասում է օրինակի, որ ուրիշը սկսէ, իսկ ինքը նրան հետևի։ Օրինակը, մանաւանդ յաջողված գործի օրինակը, նրա վրա մեծ ազդեցութիւն է գործում։ Այս դէպքում հայը մի քանի պայմաններ միշտ աչքի առջև ունի։ Նա բնաւ չէ հետաքրքրվում, որ ապրում են իրանց հայրենի հողի վրա բախտաւոր ու խաղաղ կեանքով։—Բայց չը գիտէինք, թէ ամբողջ հայաբնակ գաւառներ դատարկվել են հայերից, կամ չքաւորութիւնից սպառվելով և կամ բռնի մահմետականութիւն ընդունելով։ Չը գիտէինք, որ կենդանի հայ մարդու տեղ կը գտնենք կամ չարժուն դիակներ և կամ ընդարձակ գերեզմանատներ։ Չը գիտէինք, որ կրօնը, մեր կարծիքով՝ այդ ազգային հաստատութեան նեցուկը, խորտակվել է, և նրա տեղ մնացել են հոյակապ վանքերի և եկեղեցիների աւերակներ միայն։ Չը գիտէինք, որ լեզուն, ազգային այդ սրբազան ժառանգութիւնը, կորել է հայ մարդու բերանից, և այսօր նա խօսում է կամ քրդերէն և կամ թուրքերէն։ Չը գիտէինք, որ այժմեան քաջ քրդերի մեծ մասը, որոնք հայի համար Աստուծոյ պատիժ և պատուհաս են դարձել, մի յիսուն կամ հարիւր տարի առաջ մեր արիւնակից եղբայրներն էին, մեր լեզուով էին խօսում և մեր եկեղեցում էին աղօթում։—Մի խօսքով, մենք ոչինչ չը գիտէինք, մենք այժմեան Հայաստանի մասին խիստ անորոշ և խիստ մթին տեղեկութիւններ ունէինք, և տակաւին յայտնի չէր մեզ, թէ հայերից մնացած այժմեան ցիրուցան փշրանքները, դառն հանդամանքների պատճառով, ստրկութեան ծանր լծի տակ, այն աստիճան փչացել են, այն աստիճան այլանդակվել են, որ կորցնելով իրանց լաւ յատկութիւնները, սեպհականել են մի ցած, փոքրոգի, երկչոտ և նենգամիտ բնաւորութիւն...։

Վարդանը հետաքրքրութեամբ լսում էր. պ. Դուդուկչեանը շարունակեց.

—Բայց մեր ձեռքումն էին հաւաքված բոլոր ուժերը, մենք կարող էինք մեծ գործ կատարել։ Մեզ մօտ էր ազգի պատրիարքը, ժողովրդի զբաղումը, որ բնաւ մարմնի վրա չէր մտածում։ Մեզ մօտ էր ազգային երեսփոխանական ժողովը, որ զբաղված էր ինտրիգաներով և չնչին հարցերով։ Մեզ մօտ էր ուսեալ երիտասարդութիւնը, որ թնդեցնում էր Բոսֆորի ափերը ազգային սահմանադրութեան տարեդարձի երգերով, և բնաւ չէր մտածում, որ նոյն բոպէում Հայաստանում արիւն և արտասուք էր հոսում։ Մեզ մօտ էր տպագրութիւնը, որ ամենևին ուշադրութիւն չէր դարձնում, թէ ինչ վիճակի մէջ է ապրում հայը հայրենի հողի վրա, և միշտ զբաղված էր օտարների կեանքով։ Մեզ մօտ էին դպրոցները, որ չը տուեցին Հայաստանին ոչ մի օրինաւոր վարժապետ։ Մեզ մօտ էր թատրոնը, որ միանգամ գոնէ դուրս չը բերեց իր բեմի վրա հայաստանցու թշուառ պատկերը, և կերակրում էր հասարակութիւնը ֆրանսիական խոհանոցի աղտեղութիւններով։ Մեզ մօտ էին ազգի պետերը, որ չողոքրթում էին Դրան կամայականութիւնները և իրանց համար փառք էին դիզում։ Մեզ մօտ էր նիւթական ուժը—արծաթը,— որ ամիրաների պալատներն էր միայն զարդարում և հայաստանցու բարօրութեան համար մի փարայ անգամ չէր ծախսվում։—Մի խօսքով, մենք մեր ձեռքում բռնած ունէինք ազգի յառաջադիմութեան զեկը, կարծես, մի չար մտքով նրան մոլորեցնելու և դէպի կորուստ տանելու համար...։

—Ես, առաջ տարաւ նա,—իմ և իմ մի քանի համախոհների դիտաւորութիւնը կատարեալ դօնքիշօտութիւն եմ համարում։ Ի՞նչ կարելի է սպասել։ Ամբողջ ժամանակներ նստել Պոլսում բոլորովին անգործ, չը թեթևացնել Հայաստանի կեանքը, չուսումնասիրել երկիրը, չը ծանօթանալ ժողովրդի պէտքերի և պահանջների հետ, չը նախապատրաստել նրան մի լաւ ապագայի համար,—և յանկարծ յայտնվել նրա մէջ, նրա ձեռքը զէնք տալ, որ կռւէ իր անձնապաշտպանութեան համար,—դա հաղիւ թէ կարող էր ընդունելութիւն գտնել։ Այսուամենայնիւ, ես չեմ վհատում, իմ հաւատը բնաւ չէ խախտվում, ես և դուցէ իմ բոլոր համախոհներս կընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ կը բացանէ մեր հետևողների առջև. նրանք կանցնեն մեր դիակների վրայով...։

Վերջին խօսքերը լսելու ժամանակ Վարդանը չը կարողացաւ զսպել իր սրտի զեղմունքը, նա դրկեց պ. Դուդուկչեանին և համբուրեց նրան, ասելով.

—Այսպիսի գործը, այո՛, զոհ է պահանջում... փառք և պատիւ նրան, ով որ կը լինի առաջին զոհը...։

Գիշերի կէսից անցել էր արդէն։ Օդայի մէջ քնելու անկողինները վաղուց պատրաստ էին։ Բայց երկու երիտասարդները երկար մնացին անքուն։ Պ. Դուդուկչեանը կրիտիկական անխնայ քննադատութեամբ խօսում էր Կ. Պոլսի ցնորամիտ երիտասարդութեան վրա, խօսում էր տպարդիւն եկեղեցականների վրա, ասելով,—«Եթէ այդ երկրում գտնված վանքերի և եկեղեցիների տասնից մէկ մասի փոխարէն օրինաւոր դպրոցներ լի-

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

ԻԱ.

Ծերունի Խաչօն իր որդիների հետ հեռանալուց յետոյ, Վարդանը և պ. Դուդուկչեանը մնացին օդայի մէջ մենակ։

—Իրաւ որ, հողը պատրաստ չէ... նկատեց Վարդանը, նայելով պօլսեցու բոլորովին դեղնած և տխրամած դէմքի վրա։

—Ո՞վ է մեղաւոր, հարցրեց պ. Դուդուկչեանը և նոյն բոպէում, կարծես, նրա սրտի մի մասը խորտակվեցաւ ներքին վրդովմունքից։—Ծերունին շատ խելօք է, և աւելի խելօք քան թէ մեզ նման յիմար թուղթ մրոտողները։ Նա բաւական ճիշտ նկատեց, թէ մեր՝ պօլսեցիներիս գործն էր վաղօրօք պատրաստել ժողովուրդը։ Բայց ի՞նչ արեցինք մենք։— Ոչինչ....Մենք ամենևին նախապատրաստութեան հոգ չը տարանք, որովհետև մեզ չէր հետաքրքրում իրական Հայաստանը իր սարսափելի թշուառութիւններով։ Մենք շլացած էինք պատմական Հայաստանի անցեալ փառքովը միայն։ Մենք այժմեան Հայաստանը ամենևին չէինք ճանաչում, և ոչ մտածում էինք ճանաչել։ Մենք ճանաչում էինք նրան մի քանի հին պատմագրներից, և երևակայում էինք, թէ տիտանների այդ երկրում տակաւին Տիգրաններ, Արամներ, Վահաղներ, Վարդաններ և Ներսէս մեծեր են բնակվում։ Մենք երևակայում էինք նրա բազմամարդ քաղաքները, որոնց մէջ արհեստը և վաճառականութիւնը հայ մարդու ձեռքում ծաղկելով, շնորհում էին նրան երկրի նիւթական հարստութիւնը։ Մենք երևակայում էինք նրա չէն գիւղերը, նրա մշակված դաշտերը, որ լցնում էին հայ երկրագործի ըշտեմարանները Աստուծոյ բոլոր բարիքներով։ Մենք հաւատացած էինք, թէ երկրի աղդաբնակութեան մեծամասնութիւնը բաղկացած է հայերից, որ ապրում են իրանց հայրենի հողի վրա բախտաւոր ու խաղաղ կեանքով։—Բայց չը գիտէինք, թէ ամբողջ հայաբնակ գաւառներ դատարկվել են հայերից, կամ չքաւորութիւնից սպառվելով և կամ բռնի մահմետականութիւն ընդունելով։ Չը գիտէինք, որ կենդանի հայ մարդու տեղ կը գտնենք կամ չարժուն դիակներ և կամ ընդարձակ գերեզմանատներ։ Չը գիտէինք, որ կրօնը, մեր կարծիքով՝ այդ ազգային հաստատութեան նեցուկը, խորտակվել է, և նրա տեղ մնացել են հոյակապ վանքերի և եկեղեցիների աւերակներ միայն։ Չը գիտէինք, որ լեզուն, ազգային այդ սրբազան ժառանգութիւնը, կորել է հայ մարդու բերանից, և այսօր նա խօսում է կամ քրդերէն և կամ թուրքերէն։ Չը գիտէինք, որ այժմեան քաջ քրդերի մեծ մասը, որոնք հայի համար Աստուծոյ պատիժ և պատուհաս են դարձել, մի յիսուն կամ հարիւր տարի առաջ մեր արիւնակից եղբայրներն էին, մեր լեզուով էին խօսում և մեր եկեղեցում էին աղօթում։—Մի խօսքով, մենք ոչինչ չը գիտէինք, մենք այժմեան Հայաստանի մասին խիստ անորոշ և խիստ մթին տեղեկութիւններ ունէինք, և տակաւին յայտնի չէր մեզ, թէ հայերից մնացած այժմեան ցիրուցան փշրանքները, դառն հանդամանքների պատճառով, ստրկութեան ծանր լծի տակ, այն աստիճան փչացել են, այն աստիճան այլանդակվել են, որ կորցնելով իրանց լաւ յատկութիւնները, սեպհականել են մի ցած, փոքրոգի, երկչոտ և նենգամիտ բնաւորութիւն...։

Վարդանը հետաքրքրութեամբ լսում էր. պ. Դուդուկչեանը շարունակեց.

—Բայց մեր ձեռքումն էին հաւաքված բոլոր ուժերը, մենք կարող էինք մեծ գործ կատարել։ Մեզ մօտ էր ազգի պատրիարքը, ժողովրդի զբաղումը, որ բնաւ մարմնի վրա չէր մտածում։ Մեզ մօտ էր ազգային երեսփոխանական ժողովը, որ զբաղված էր ինտրիգաներով և չնչին հարցերով։ Մեզ մօտ էր ուսեալ երիտասարդութիւնը, որ թնդեցնում էր Բոսֆորի ափերը ազգային սահմանադրութեան տարեդարձի երգերով, և բնաւ չէր մտածում, որ նոյն բոպէում Հայաստանում արիւն և արտասուք էր հոսում։ Մեզ մօտ էր տպագրութիւնը, որ ամենևին ուշադրութիւն չէր դարձնում, թէ ինչ վիճակի մէջ է ապրում հայը հայրենի հողի վրա, և միշտ զբաղված էր օտարների կեանքով։ Մեզ մօտ էին դպրոցները, որ չը տուեցին Հայաստանին ոչ մի օրինաւոր վարժապետ։ Մեզ մօտ էր թատրոնը, որ միանգամ գոնէ դուրս չը բերեց իր բեմի վրա հայաստանցու թշուառ պատկերը, և կերակրում էր հասարակութիւնը ֆրանսիական խոհանոցի աղտեղութիւններով։ Մեզ մօտ էին ազգի պետերը, որ չողոքրթում էին Դրան կամայականութիւնները և իրանց համար փառք էին դիզում։ Մեզ մօտ էր նիւթական ուժը—արծաթը,— որ ամիրաների պալատներն էր միայն զարդարում և հայաստանցու բարօրութեան համար մի փարայ անգամ չէր ծախսվում։—Մի խօսքով, մենք մեր ձեռքում բռնած ունէինք ազգի յառաջադիմութեան զեկը, կարծես, մի չար մտքով նրան մոլորեցնելու և դէպի կորուստ տանելու համար...։

—Ես, առաջ տարաւ նա,—իմ և իմ մի քանի համախոհների դիտաւորութիւնը կատարեալ դօնքիշօտութիւն եմ համարում։ Ի՞նչ կարելի է սպասել։ Ամբողջ ժամանակներ նստել Պոլսում բոլորովին անգործ, չը թեթևացնել Հայաստանի կեանքը, չուսումնասիրել երկիրը, չը ծանօթանալ ժողովրդի պէտքերի և պահանջների հետ, չը նախապատրաստել նրան մի լաւ ապագայի համար,—և յանկարծ յայտնվել նրա մէջ, նրա ձեռքը զէնք տալ, որ կռւէ իր անձնապաշտպանութեան համար,—դա հաղիւ թէ կարող էր ընդունելութիւն գտնել։ Այսուամենայնիւ, ես չեմ վհատում, իմ հաւատը բնաւ չէ խախտվում, ես և դուցէ իմ բոլոր համախոհներս կընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ կը բացանէ մեր հետևողների առջև. նրանք կանցնեն մեր դիակների վրայով...։

Վերջին խօսքերը լսելու ժամանակ Վարդանը չը կարողացաւ զսպել իր սրտի զեղմունքը, նա դրկեց պ. Դուդուկչեանին և համբուրեց նրան, ասելով.

—Այսպիսի գործը, այո՛, զոհ է պահանջում... փառք և պատիւ նրան, ով որ կը լինի առաջին զոհը...։

Գիշերի կէսից անցել էր արդէն։ Օդայի մէջ քնելու անկողինները վաղուց պատրաստ էին։ Բայց երկու երիտասարդները երկար մնացին անքուն։ Պ. Դուդուկչեանը կրիտիկական անխնայ քննադատութեամբ խօսում էր Կ. Պոլսի ցնորամիտ երիտասարդութեան վրա, խօսում էր տպարդիւն եկեղեցականների վրա, ասելով,—«Եթէ այդ երկրում գտնված վանքերի և եկեղեցիների տասնից մէկ մասի փոխարէն օրինաւոր դպրոցներ լի-

տպելը, որոնք հրէաների կեանքից վեր առած, պատահում են մայրաքաղաքների լրագիրներում, թերահաւատութեամբ վերաբերվելով դէպի լրագրական տեղեկութիւններից շատերը: Սուութեան և բամբասանքի կոյտերի մէջ թէ և շատ անգամ պատահում է ճշմարտութեան մի կորիզ,—բայց ինչպէս իմանաս ո՞ւր է այդ կորիզը:

«Մենք հաւատացած ենք, որ եթէ ռուս լրագիրներից շատերը ձեռնարկվէին այն սկզբունքներով, որոնցով ձեռնարկվում է «Մշակ» լրագիրը, ռուսաց հասարակութիւնը, որի թւում, ինչպէս ամեն տեղ, կան շատ դիւրահաւատ մարդիկ, վաղուց է արդէն կը փոխէր իր հայեացքները հրէաների վրա:

«Նոյն անկողմնապահութեամբ դէպի հրէաները յայտնվում են և Կովկասի վարչութեան մէջ դիրք ունեցող հայերը, ինչ պաշտօն և վարէին նրանք: Համարելով իրանց հաւատարիմ զաւակներ Ռուսաստանի, թէև նրանք ծագումով ռուս չեն, հայերը համարում են հրէաներին էլ Ռուսաստանի հաւատարիմ զաւակներ, նայում են նրանց վրայ որպէս ռուս քաղաքացիների վրա, և այլապէս նայել չեն կարող:»

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մարտի 13-ին

Վանի և շրջակայքի մեր սովատանջ հայ եղբայրների և քոյրերի սոսկալի նեղութիւնքը, արձագանք է տալիս դէպի հայկական սերունդները և շարժում է ամեն մի ազնիւ զգացմունք և հոգի ունեցող հայի սիրտը՝ պարենի օգնութիւն հասուցանելու նրանց թալկացած սրտին: Ով չէ լսում, նա խուլ է և խարամանուց խաբված, ով չէ շարժվում օգնել մի փոքրիկ լումայով, նա հայ չէ և օտար արիւն ունի: Ճշմարիտ հայն՝ հայկական սիրով ոգևորված կը կարեկցէ իր համարիւն եղբայրներին:

Մեր սովալլուկ հարազատների հառաչանքը, լսեց և Նորդ Երևան քաղաքի փոքրիկ մասը: Նորդի ժողովուրդներից շատերը՝ կարծես կըրթված են նուիրաբերութեան մէջ: Չը զլացան իրանց աղքատիկ քսակը բացանել, քանի մի լումայ դցել մեր հացախնդիր եղբայրների դանձանակը: Բարեկենդան էր, մի խումբ կողմվելով բարեկենդան կանէր, երբ մի հայ սիրողից առաջարկվեցաւ մի բաժակ Վանի սովելոց աղատութեան. մի տխուր պատկեր ներկայացաւ ամենքի առաջ, խսկոյն հանգանակութիւն բացվեցաւ յօգնութիւն սովատանջներին: Ոչ ոք չը ինայեց: Հետևեալ օրը, նուիրաբերվեցաւ մի քանիներից ևս: Այս ազդավայել կեանք տուող գործին մասնակցեցին Նորդի դպրոցաց ուսուցիչները, վարժուհին և իրանց սակաւամանեայ տուրքով աշակերտներից և աշակերտուհիներից մի քանիները: Գոյացած գումարն է 87 ռուբլի, որը ցուցակագրով ուղարկելով ձեզ, խնդրեմ հասուցանել Վանի սովատանջներին: Եւ բարեհաճեցէք տպագրել նուիրատուների տնունները «Մշակ» լրագրի մէջ ի խրախուսութիւն նուիրողների:

Ա. Մատթէոս Տէր-Պողոսեանց 3 ր., Գրիգոր Ամիրեանց 3 ր., Բարսեղ Եղիազարեանց 3 ր., Մկրտիչ Ա. քահանայ Տէր-Պողոսեանց 2 ր., Իսահակ Նիկողոսեանց 1 ր., Գեղան Մարկոսեան 1 ր., Զաքարիա Մկրտչեան 1 ր., Յովսէփ Հայրապետեան 1 ր., Ռուստամ Յակոբեանց 1 ր., Յովհաննէս Ներսէսեան 2 ր., Գէորգ Գեօղալեանց 1 ր., Սային Յարութիւնեան 1 ր., Սերովբէ Ստեփանեան 1 ր., Թամրազ Սարգսեան 1 ր., Աստուածատուր Խանաղեանց 1 ր., Գալուստ Մ. Մկրտչեան 1 ր., Նաւասարդ Առաքելեան 1 ր., Աւետիս Եղեանց 1 ր., Աւետիս Սարգսեան 1 ր., Իսահակ Տէր-Աւետիսեանց 1 ր., Գէորգ Գէլանեան 1 ր., Ստեփան Սիմէօնեան 1 ր., Փիլիպպոս Վարդանեան 1 ր. 25 կ., Գրիգոր Խաչատրեան 1 ր., Պապի Յարութիւնեան 1 ր., Սուքաս կարապետեան 1 ր., Ոսկան Յարութիւնեան 1 ր., Գալուստ Յովհաննէսեան 1 ր., Յովհաննէս Գալստեան 1 ր., Եազոր Եղեանց 1 ր., Յովհաննէս Խաչատրեան 1 ր., Վասիլ Խէչանեանց 2 ր., Աղարիա Աղարեանց 2 ր., Սրսէն Գաբրիէլեանց 1 ր., Գրիգոր Թադէոսեան 1 ր., Գրիգոր Մովսէսեան 1 ր., Պետրոս Կարապետեան 1 ր., Պարոնբէկ Թորոսեանց 1 ր., Յակոբ Մկրտչեան 1 ր., Յարութիւն Աւետիսեան 1 ր., Խաչատուր Յովսէփեան 1 ր., Հայրապետ Մկրտչեան 1 ր., Նաւասարդ Եսայեանց 1 ր., Յովհաննէս Մկրտչեան 1 ր., Թադէոս Տէր-Պողոսեան 1 1 ր., Վասիլ Աղաջանեան 1 ր., Մնացական Տէր-Մատթէոսեան 1 ր., Յարութիւն Բատալեան 1 ր., Մարկոս Կարապետեան 1 ր., Մակար Բաբոեան 1 ր., Ոսկան Թորոսեանց 1 ր., Ա. Նաղար Տէր-Աւետիսեան 1 ր., Յովհաննէս Յարութիւնեանց 2 ր., Բ. Գալստեան 60 կ., Ա. Դաւթեանց 30 կ., Պ Յովհաննէսեան 50 կ., Յ. Մնացականեան 50 կ., Մկրտիչ Աւետիսեան 1 ր.:

Նորդի կանանց դասից. Սալպի Ամիրեանց 3 ր., Սուսամբար Տէր-Յովհաննիսեանց 1 ր., Զաւահիր Եղիազարեանց 1 ր., Անոյշ Եղիեանց 1 ր., Շողակաթ Տէր-Պողոսեանց 2 ր., Եղիսաբէթ Մըկրտչեանց 80 կ., Եղիսաբէթ Մուրադեանց 40 կ., Նորդի դպրոցաց ուսուցիչները, Վահան քահանայ Տէր-Յովհաննէսեանց 2 ր., Մկրտիչ Զաքարեանց 2 ր., Յովհաննէս Մելքոնեան 1 ր., Վարժուհի Խանում Մանուչարեանց 1 ր., աշակերտուհիներից Անոյշ Յովհաննէսեան 20 կ., Հեղինէ Յարութիւնեան 10 կ., Մանիկ Եղիեանց 20 կ., Նոյիմզար Պետրոսեան 10 կ., Փառանձեմ Տէր-Աւետիսեցան 15 կ., Սոփիէ Տէր-Յովհաննէսեանց 10 կ., Տրդատ Միլիք Ղազարեան 20 կ., Դանէլ Աղարեանց 20 կ., Միքայէլ Տէր-Պետրոսեանց 10 կ., Շմաւոն Տէր-Պետրոսեանց 10 կ., Արմենակ Խանաղեանց 20 կ., Սիմէոն Գեօղալեանց 20 կ., Մատթէոս Գէորգեան 20 կ., Ալէքսան Յարութիւնեան 10 կ., Լևոն Մկրտչեան 15 կ., Կարապետ Տէր-Պողոսեանց 20 կ., Վարդան Զաքարեանց 15 կ., Արսէն Պողոսեանց 15 կ., Վահան Դաւթեանց 15 կ., Արտաշէս Տէր-Յովհաննէսեանց 15 կ., Ստեփան Ենոքեան 20 կ., Գէորգ Տէր-Աւետիսեանց 10 կ., Թադէոս Աւագեան 10 կ., Մատթէոս Խաչատրեան 10 կ., Թադէոս Եսայեանց 10 կ., Սերովբէ Իսահակեանց 15 կ., Յովհաննէս Պողոսեանց 10 կ., Ծերունի Տէր-Աւետիսեանց 15 կ., օր. Եղիսաբէթ Պողոսեան 1 ր.: Ընդամենը 87 ր.:

Մի Նորդեցի

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

Մարտի 19-ին

Հայոց ազգի ընդհանուր չարժողութեանը յօգուտ Վանի սովելոց ձայնակից եղաւ և Գօրու փոքրիկ հասարակութիւնը, առաջնորդութեամբ [illegible] սիրելի համաքաղաքացի Տէր-Ստեփանեանց աւագ քահանայի: Անցեալ կիրակի, ամսիս 9-ին, չը նայելով եղանակի անտանելի վատութեան, Սուրբ Ստեփաննոս քարաշէն եկեղեցին լի էր թէ հայ և թէ օտարազգի ունկնդիրներով: Տէր-Հօր տխուր կերպարանքը, արտասուալից աչքերը, արդէն պատրաստած էին ներկայ եղողների խորին ուշադրութիւնը: Քարոզիչը ազգու և գրաւիչ խօսքերով ներկայացնելով ունկնդիրների առաջ սովելոց անտանելի դրութեան տխուր պատկերը, յիշեցրեց թէ Հայաստանի զաւակաց մեծամասնութեան ներկայ վիճակը նմանում է Երուսաղէմից Երիքովը գնացող աւետարանական վիրաւորեալին. «չանցկենանք նոցա մօտով անդութ քահանայի և սամարացու նման մօտենանք կարեկցութեամբ, լուանանք սովից առաջացած վերքերը, չը խնայելով մեր օժանդակութիւնը անվատանգ հասուցանենք նրանց ապահովութեան պանդոկը: Գրիչս անզօր է նկարագրելու այն տպաւորութիւնը, որ ունեցան այս տաք խօսքերը ունկնդիրների վրա: Աստուծոյ տաճարը կարծես ողողվեց և սուգի հանդիսարան էր դարձել: Վերջապէս տէր-հայրը յայտնեց, թէ սա ազգային կեանքի մահու հարց լինելով, քաղաքիս ոչ մի հայ ընտանիք և ոչ մէկը նորա անդամներից յետ չը պիտի մնայ մասնակցութիւնից. մինչև անգամ յետին աղքատը իր լուման թող ձգէ այս ազգային գանձանակի մէջ: «Հաւատացնում եմ ձեզ, շարունակեց տէր-հայրը, թէ ով որ ամեն օր դէմ առ դէմ կանգնած է նեղութեան և կարօտութեան առաջ, նա աւելի լաւ գիտէ գնահատել և կարեկցել իր նմանների դրութեանը:» Որովհետև տէր հօր պատգամաւորական զբաղմունքը չը ներեցին խսկոյն չարունակել նուիրատուութիւնը և այդ միջոցին ևս վերահասաւ նաև հոգևոր իշխանութեան կարգադրութիւնը, որով քաղաքիս երեք եկեղեցիների աւագ քահանաները, այն է՝ Տէր Գրիգոր Փանոսեանց, Տէր Յովհաննէս Տէր-Մինասեանց և Տէր Ստեփան Տէր-Ստեփանեանցը պարտաւորվում էին գործին մասնակցելու, ուստի ամսոյս 18 քաղաքական վարչութեան դահլիճում կայացաւ ժողով՝ ի ներկայութեան 40 անձանց: Ժողովականը Տէր-Ստեփան հօր ճառը լսելուց յետոյ, խսկոյն կազմեցին յանձնաժողով հետևեալ 8 մարդուց, որոնք են՝ Ստ[illegible]

քրքրվում, թէ ինչպէս են ապրում, ինչ եղանակով են գործում օտար ազգերը օտար երկրներում: Ուզում եմ ասել, որ հայը օտարներից օրինակ չէ վեր առնում, այլ սպասում է, որ օրինակը տար նրան իր նման մի հայ:—Ուրեմն, մենք առաջին օրինակը կը տանք, և ես հաւատացած եմ, որ մեզ կը հետևեն շատերը: Ես լաւ եմ ճանաչում մեր ժողովուրդը. նա այնքան շատ տանջվել է, որ հէնց այս րոպէիս պատրաստ է թուրքի, քրդի միսը ուտել և արիւնը խմել, եթէ մի հնար կը գտնէ: Նա սրտումը սաստիկ ատելութիւն ունի, միայն այդ ատելութիւնը թաղնված է:

Վարդանը և պ. Դուդուկչեանը ուրախութեամբ լսում էին Հայրապետի ասածները: Նրա մէջ խօսում էր ժողովրդի ձայնը:

—Երջանիկ է այն ժողովուրդը, որ ատել գիտէ, բացականչեց պօլսեցի երիտասարդը մի առանձին ոգևորութեամբ:—Նա, որ ատել չը գիտէ, զուրկ է մնում և սիրոյ զգացմունքից...:

—Իմ հայրը ասում էր, թէ հողը պատրաստ չէ՝ խօսեց Հայրապետը:—Նա իսկապէս խելացի մարդ է, նրա սրտում կան շատ ծածկված և բարի խորհուրդներ: Բայց նրա խելացի խրատները, նրա զգուշաւորութիւնը հասնում է մինչև յանցաւորութեան: Նա իր համբերութեամբ թմրեցրել է մեզ և պահել է քարացած անշարժութեան մէջ: Մեր դրութեան մէջ, իմ կարծիքով, համարձակութիւնը անձնավստահութիւնը և մինչև խենթութեան հասած յանդգնութիւնը աւելի գործ է կատարում, քան թէ իմաստունների լուրջ և խոհեմ մտածութիւնները:

—Այո՛, ամենչև խելացին կը մտածէ, խենթը գետից անց կը կենայ»... պատասխանեց Վարդանը ծիծաղելով:

—Այդ շատ ճիշտ է, նկատեց պ. Դուդուկչեանը:—Խելացիների խելքը շատ անգամ խաբում է իրանց, և խաբվածները այն ժամանակ միայն հասկանում են՝ թէ յիմարվել են, երբ զբաղերը իրանց գործը արդէն աւարտած են լինում...: Մի ժամանակ Կ. Պոլսի մեր խելացիները մտածում էին, թէ հայերի համար աւելի նպաստաւոր է Թուրքաց անկիրթ և անկարգ կառավարութիւնը, քան թէ մի բարեկարգ և քաղաքակրթված կառավարութիւն: Մտածում էին, թէ մի քաղաքակրթված կառավարութիւն իր կուլտուրական բարձր զարգացումով կարող էր կլանել և ոչնչացնել հայերին.—մինչդեռ խելացի հայերը, օգուտ քաղելով Թուրքի յիմարութիւններից, գոյութեան կռիւի մէջ կարող էին մրցել նրա հետ, կարող էին յաղթող հանդիսանալ: Այդ ենթադրութիւնը թէօրիայի կէտից ուղիղ է: Բայց ամենաճիշտ փիլիսոփայական թէօրիան երբեմն կեանքի փորձի մէջ յայտնվում է սխալ: Պատմութիւնը իր առանձին զարտուղութիւններն ունի: Եթէ մի քաղաքակրթված մեծ ազգութիւն կարող է կլանել փոքր ազգութիւնները, նոյնը կարող է կատարել և մի անքաղաքակիրթ մեծ ազգութիւն իր մանր հպատակ ազգութիւնների վերաբերութեամբ: Տարբերութիւնը միայն գործ դրած միջոցների և հնարների մէջն է.—մէկը սպանում է բարբարոսական միջոցներով, միւսը՝—կուլտուրայի միջոցներով:

—Ես աւելի պարզ կը խօսեմ, չարունակեց պ. Դուդուկչեանը:—Մեզանից ոչ ոք մինչև այս օր չէր հասկացել Թուրք կառավարութեան գաղտնի քաղաքագիտութիւնը հայերի վերաբերութեամբ: Մեզանից ամեն մէկը երեխայական կարճատեսութեամբ կրկնում էր, թէ «մեր ապագան Թիւրքիայումն է»: Մենք նայում էինք կատարվող դեղծումների, անկարգութիւնների և բարբարոսութիւնների արտաքին մակերևոյթի վրա, բայց թէ որպիսի դժոխային մեքենայութիւն էր թաղնված նրանց տակին,—այդ մենք չէինք տեսնում: Մենք միայն տեսնում էինք հարստահարութիւններ, սպանութիւններ, բռնի կրօնափոխութիւններ և զանազան տեսակ չարագործութիւններ, որ կատարում էին մեր հարևան բարբարոս ցեղերը:—Այդ բոլորը մենք աւօրեայ և պատահական էինք համարում, և չը գիտէինք, որ յիշեալ անկարգութիւններին մի գաղտնի քաջալերող կայ, չը գիտէինք, որ այդ բոլորը կատարվում է բարձր աստիճանաւորների թելադրութեամբ: Մենք մեղադրում էինք կառավարութիւնը այն մտքով միայն, որ նա թոյլ է, որ նա անհոգ է, որ նա իր անզգամ հպատակները զսպել չը գիտէ: Բայց չէինք հասկանում, որ կառավարութեան պաշտօնեաները իրանք այդ բարբարոսներին գրգռում էին հայերի դէմ, քրիստոնեայ տարրը ոչնչացնելու համար: Ինչու, կը հարցնէք ինձ:

—Թուրքիան շատ լաւ է հասկացել, եթէ նա մի օր կը զրկվի իր եւրոպական և ասիական նահանգներից,—այդ կորստի պատճառը լինելու են տեղային քրիստոնեայ ազգաբնակութիւնները: Նա հասկացել է, որ քրիստոնեայ հպատակների գոյութիւնը իր պետութեան մէջ ամեն անգամ պէտք է առիթ տայ քրիստոնեայ թագաւորներին միջամտել Թիւրքիայի գործերի մէջ և բարձրացնել մի նոր արևելեան հարց: Իր նահանգները չը կորցնելու համար, քրիստոնեայ թագաւորների միջամտութիւնից ազատվելու համար, Թուրքը ստիպված է ոչնչացնել քրիստոնեաներին:—Քրիստոնեաների պատճառով նա իր եւրոպական նահանգներից շատերը կորցրեց և մնացածը կորցնելու վրա է: Իսկ ասիական երկրներից իր ամբողջութիւնը պահպանել է միայն Փոքր Ասիան: Այստեղ գլխաւոր քրիստոնեայ ազգութիւնը, որ սպառնում է պետութեան այդ մասի անջատմանը—են հայերը: Ուրեմն եւրոպական տէրութիւնների ձայնը կտրելու համար, պէտք է ցոյց տալ նրանց, որ Հայաստանում հայ չը կայ: Այդ սպանութեան գործի մէջ Թիւրքիան ընտրել է ամենայարմար դահիճներ՝—քրդերին և չէրքեզներին:

—Եթէ հաւաքելու լինենք վերջին 20—30—50 տարիների ընթացքում կատարված փաստերը, կը համոզվենք, որ այդ բոլորը ճշմարիտ է: Կը համոզվենք, որ հայերի վերաբերութեամբ գործված հարստահարութիւնները, ճնշումները, հալածանքները, յափշտակութիւնները, մի խօսքով բոլոր բարբարոսութիւնները պատահական երևոյթներ չեն:—Կը համոզվենք, որ այդ բոլորի մէջ թաղնված է մի նախապէս մտածված, կարգադրված հիմք և նպատակ, որ ծառայում են հայկական տարրը հետզհետէ ակարացնելու, ըսպառելու և վերջապէս ոչնչացնելու համար: Ես կը յիշեմ մի քանի փաստեր միայն: Հայերին անձնապաշտպանութեան բոլոր հնարներից զրկելու համար, խլեցին նրանց ձեռքից զէնքը, կապեցին, կաչկանդեցին նրանց ձեռքերը, իսկ հայերի թշնամիների ձեռքում զէնք տուեցին: Ցետոյ տեսան, որ այդ բաւական չէ հայերին ակարացնելու համար, տեսան, որ այդ տարրը, որպէս մի աշխատասէր և տնտեսագէտ ժողովուրդ, կարողանում է մրցել իր հակառակորդների հետ, կարողանում է իր գոյութիւնը պահպանել իր նիւթական զօրութիւնով—իր հարստութիւնով: Ուրեմն պէտք է ամեն հնարքներ գործ դնել, որ նա աղքատանայ, ուրեմն պէտք է մտնեսապէս մահացնել նրան: Հարկերը ծանրացրին, շրջաբերութեան մէջ եղած արժէթղթերը ոչնչացրին (առանց նախապէս յայտարարելու ժողովրդին) մի խօսքով զանազան տեսակ ֆինանսական խարդախութիւններ գործ դրեցին որպէս զի ժողովրդի ձեռքում գտնված դրամը իր արժէքը կորցնի և հարկերը վճարելու անկարող լինի,—որպէս զի առիթ ունենան նրա անտեսութեան ամենաանհրաժեշտ պարագայքի հարկերի փոխարէն վաճառել տալու, նրան երկրագործութեան աշխատութիւններից զրկելու համար: Այդ միջոցները դարձեալ չը կարողացան լրացնել Թիւրքիայի նպատակը: Ժողովուրդը տոկուն էր, եթէ [illegible] հայրենի երկրում վաստակ չէր գտնում, պան[illegible] դիտանում էր դէպի օտար աշխարհ, այ[illegible] տեղ փող էր վաստակում, և բերում, լցնում [illegible] գանձարանը: Ուրեմն ինչ պէտք էր անել [illegible] —Թիւրքիան մտածեց միանգամից ցամաքացնել հայ ժողովրդի ապրուստի աղբիւրները. նա հնարեց իր կալուածական ամենախորամանկ օրէնքները, և հայերը զրկվեցան կալուածատիրութեան իրաւունքից: Հայերի ձեռքում գտնված հողերը անցան քուրդ դերեբէյների, չէրքէզների մուֆթիների, զաղիների և զանազան վայրենի [illegible] չիրաքների ձեռքը:—Դրանք տէր դարձան, [illegible] հայը, աշխատասէր և արդիւնաբերող հայ[illegible] դարձաւ այդ բարբարոսների հողերը մշակող [illegible] ստրուկը և ճորտը: Հայաստանում հայերի [illegible] մահմեդականների մէջ եղած այժմեան անթիւ [illegible] անհամար կալուածական վէճերը ու դատերը, կա[illegible] մնում են կառավարութեան կողմից առանց [illegible] շաղրութեան, կամ եթէ վճռվում են, վճիռը կ[illegible] յանում է անպատճառ յօգուտ մահմեդականնե[illegible] Հազարաւոր օրինակներ կան այդ մասին: Եւ այդ վճիռների մէկի քննութիւնը բաւական է ապացուցանելու համար, թէ կառավարութիւնը չէ [illegible] ցանկանում, որ հայի ձեռքում հող մնայ, այլ ցանկանում է, որ նա զրկվի իր պապերի ժառանգութիւնից, որպէս զի դրանով կարողանա աւելի սաստկացնել հայերի դաղթականութիւնը և Հայաստանը դատարկելով հայերից, նրանց տեղը լցնել քրդերով և չէրքէզներով:

(Կը շարունակվի)

փանոս աւագ քահանայ Տէր-Ստեփանեանց, պաշտօնական քաղաքագլխի Գրիգոր Ամիրեանց, քաղաքական բժիշկ Զաքարիա Տէր-Մինասեանց, արհեստաւորաց ներկայացուցիչ Գրիգոր Թումանեանց, իշխան Նիկո Դէլասամիձէ, Գալուստ Ստեփանեանց, քաղաքական վարչութեան անդամ Ազալոյ Թումայեանց և Գէորգ Ռոմանեանց։ Ապա նոյն տեղում բացվեցաւ ստորագրութիւն և նուիրատուութեան գումարը հասաւ 480 ռուբլու։ Հանգիսականների հեռանալուց յետոյ յանձնաժողովը ունեցաւ իր առաջին նիստը, յորում և կարգադրեց. ա) յօրինել չորս առանձին գումար՝ մէկի մէջ քաղաքիս հայ հասարակութեան նուիրատուութիւնը մուծանելու, միւսը կանանց դասի համար, որ պիտի յանձնվի երեք անձանց, այն է Սալոմէ Տէր-Ստեփանեան, Մարիամ Խիթարեան և իշխանուհի Նինոյ Էրիսթաւին, երրորդը քաղաքիս օտարազգի բնակիչների համար, որը յանձնվելու է պ. Նիկո Դէլասամիձէին, իսկ չորրորդը Գօրու վիճակի բնակիչների համար, բ) հաւաքած փողերը յանձնել 'ի պահեստ Գալուստ Ստեփանեանին։ Յանձնաժողովը, որչափ ինձ յայտնի է, մտադիր է այս օրերումս հաւաքած փողերը խմբագրութեանդ հասուցանել, տալով հետզհետէ տեղեկութիւն նաև իր գործունէութեան հետևանքների մասին։

Դ. Պապովեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Վահան Մամիկոնեանցը խնդրում է մեզ յայտնել հետևեալը. «Այս օրերս Թիֆլիսի մէջ զանազան լուրեր են տարածվել իմ մասին, որ իբր թէ ես խօսք եմ տուել կոմիտէին մշտապէս մասնակցելու նրա ներկայացումներին։ Պարտաւորութիւն եմ համարում յայտնել, որ ես ցանկութիւն եմ յայտնել խաղալ կոմիտէի խմբի հետ միայն մի անգամ, և ես երբէք դիտաւորութիւն և ժամանակ էլ չունեմ մշտապէս խաղալ այդ խմբի հետ։»

—

Ստացանք պ. Ա. Ի. Իւզբաշեանից 5 ռուբլ յօգուտ Վանի սովատանջների։

—

Մի երիտասարդ խնդրում է մեզ յայտնել որ տալիս է հաշվապահութեան դասերը։ Պայմանների համար դիմել պէտք է Կաղիսնայա Պլատա, կամ Սուրբ Նշանի փողոցը, հաշտարար դատարանի դիմաց, տուն № 17, պ. Տէր-Յակոբեանցին։

—

Պ. Գէորգի Ծերետէլի կարդալու է շաբաթ օր մարտի 29-ին, ԹԻՖԼԻՍԻ Ժողովարանում մի հրապարակական դասախօսութիւն վրաց լեզուով «Վրաց պատմութեան հին շրջանի մասին։»

—

Տեղական լրագիրները լսել են որ պ. Ա. Ծերետէլի դիտաւորութիւն ունի հրատարակել մի նոր վրացերէն լրագիր «Գաղ» (Ուղի) վերնագրով։

—

Այսօր «Մշակն» ունի 920 բաժանորդ, իսկ Թիֆլիսում հատով ծախվող համարների հետ միասին մենք ունենք 970 բաժանորդ։

—

Պ. Խաչատուր Մելիք-Դաղայեանց գրում է մեզ ՇՈՒՇՈՒՑ հետևեալը։ «Ձեր լրագրի № 38 մէջ տպված մեր նամակի նուիրատուների թւում Խուրշուտ Մնացականեանցի մասին ասված է որ նա նուիրել է 10 ռուբլ։ Այդ սխալ է. նա նուիրել է 5 ռուբլ, որի հետ միւս նուէրների գումարը հանում է այնքան գումարի, որքան հասցրած է «Մշակի» խմբագրութեանը։»

—

Մեր երէկվայ համարում բանասիրական մէջ տպված Թիֆլիսի Թատրոնական կոմիտէի հաշվի մէջ մտաւ մի սխալ։ Երրորդ երեսի, երկրորդ էջի, տասերորդ տողի վրա ներքևից՝ տպված է 8474 ր., բայց պէտք է լինէր՝ 14,474 ր.։ Ուրեմն Արծրունու թատրոնում ներկայացումներ տալով կոմիտէը արդիւնք կունենար 16,500 ր., իսկ Պալմի մօտ 14,474 ր.։ Զանազանութիւնը 2026 ռուբլ է։ Ուրեմն կոմիտէը դէֆիցիտ չէր ունենայ։

—

Պարտաւորութիւն ենք համարում յայտնել ախալցխացիներին, որ այն լուրը թէ ԱԽԱԼՑԽԱՅԻ հայ օրիորդական դպրոցներից մինի մէջ մի քահանայ-ուսուցիչ մանուկներին անխնայ ծեծում է, հաղորդված է եղել մեզ նոյն իսկ այն դպրոցից, և ոչ թէ մեր մշտական աշխատակցից, պ. Գրիգոր Նիկողոսեանցից, որ ինչպէս ինքն մեզ գրում է, բոլորովին տեղեկութիւն էլ չունէր այդ անցքի մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 15 մարտի

Բաւական ժամանակ է որ այլ ևս թիֆլիս հրատարակուած հայ թերթերն չեմք ընդուներ։ Թիւրք կառավարութիւնը Ռուսիոյ դեսպանատնէն խնդրեր է որ հրամայէ ռուս թղթատարութեան այդ թերթերն չը յանձնել բաժանորդաց, թղթատարութիւնը այդ հրամանը ի գործ դրած, հետևաբար «Մշակի» 19 և «Մեղու» 11 թիւերէն յետոյ այլ ևս չեմք ընդունած, ուստի ատեն մը այլ ևս նեղութիւն մ'առնուք և մի խրկէք. թիւրք կառավարութիւնը մեր մտաւոր շարժմանց շատ ուշադիր է և եթէ ապիկար չը լինէր, շատ արդելքներ կրնար յարուցանել։ Հիմկու—հիմա ինչ որ կարող է այն կընէ։ Կ. Պոլսոյ թաղերէն մին Ենի-Գաբու, անհատական վարժարանի մը մէջ վիճակահանութեան մը առթիւ ատենախօսութիւն պիտի լինէր, տեղական իշխանութիւնը արգելեց, առարկելով որ այդ չէնքը եկեղեցւոյ չը վերաբերեր, ուստի հոն հայերէն ատենախօսել կամ դասախօսել ներելի չէ, (չեմք գիտէր որ օրինօք) ուստի ատենախօսը ստիպուեցաւ Թուրքերէն խօսել և ոտիկանութեան պաշտօնեայ մ'ալ ներկայ գտնված է։ Կ. Պոլիս հրատարակեալ թերթերն Ասիա խրկուած ժամանակ թղթատարի մեծ ծախքեր պէտք է վճարուին, օրինակի համար փոխանակ կրամի վրա հաշուելով առնելու, թերթի վրա կառնուն, մէկ թերթին 10 փարայ (որ ըսելէ 2½ կոպէկ) արդ 20 փարա ծախուած թերթ մը կը վճարէ Կ. Պոլսէն Վան խրկուելու համար իւր գնոյն կէսը. անդին 40 փարա ծախուող թերթ մը նոյնպէս պիտի վճարէ 10 փարա. այս կարգադրութիւններն վերջին տարիներս եղան որպէս զի որչափ հնար է Հայաստանի և Կ. Պոլսոյ մէջ յարաբերութիւնք քիչ ըլլան։ Վանայ մէջ օրաթերթի մը կամ շաբաթաթերթի մը հրատարակութեանը պիտի ձեռնարկուէր, և Կ. Պոլիս ալ բաւական աշխատողներ կային որպէս զի պէտք եղած դրամագլուխը հայթայթեն, բայց կառավարութիւնը հրաման չը տուաւ առարկելով թէ ուր որ թուրքերէն թերթ չը հրատարակուիր, հոն ներելի չէ որ հայերէն թերթ մը հրատարակուի. թիւրքերուն անհանդուրժելի է որ մենք իրենցմէ առաջ անցնենք մտաւորապէս։ Անցեալները Բ. Դրան թիւրք երիտասարդ պաշտօնեայ մը հայ պաշտօնէի մը հետ միասին այցելութեան կերթայ Արարատեանի դրասենեակը, հոն եղած կարգաւորութիւնը տեսնելով, չը կրնար զարմանք չը յայտնել թէ իրանց պաշտօնատուններէն շատ աւելի լաւ է, ցաւ կը յայտնէ, թէ մինչ հայք զանազան ընկերութիւններ կազմած սկսած են յառաջադիմել, թիւրքերն ամէն ինչ կառավարութիւնէն ակնկալելով ոչ ինչ կընեն. փափաք ցոյց կուտայ թէ իրենք ալ սկսեն ընկերութիւն կազմել, պէտք եղած հրահանգներն կը ստանայ, տեղեկագիրներ կառնու և թրքաց ու հայոց իբր եղբայր աշխատակից լինելու կարևորութեանը վրա խօսելով կը մեկնի. դեռ չը լսեցինք որ այդ ընկերութիւնը կազմուած լինի։ Ինչ որ ալ ըսեն, թրքաց շատ դժուար է մտաւորական յառաջադիմութիւն, ուստի մեզ արդելք լինելն իրենց շահաւոր կը համարին։ Միւս կողմէ քիւրդերը կրթելու միջոցները կը խորհուին. Թերսիմ գացող հրամանատարները կը տեղեկացնեն թէ դրամ խրկելու է որ քիւրդերու համար դպրոցներ շինուին, հոսկէ կառավարութիւնը կը պատասխանէ թէ պէտք է քիւրդերէն ստակ առնուլ և այնպէս դպրոց շինել և մատակարարել զանոնք. պատասխան մը որոյ գործադրութիւնը անհնար է. սակայն քիւրդերը տրամադիր են կրթուելու և մեր շահերն կը պահանջեն որ զիրենք մեր վարժարաններն ընդունինք, օգուտներն բացատրել աւելորդ է։ Երբ պ. Վասիլեան անցեալ ամառ «Արարատեանի» կողմէ Թերսիմ գնաց քիւրդերու այդ բոյնը, որպէս զի երկիրը քննէ և հոն կրթութիւն տարածելու սկզբնաւորութիւն մը ընէ, կը պատմէ թէ երբ ժողովրդի գլուխը կեցած ժողովրդի ծախիւքը և աշխատութեամբ խուբսի վարժարանը կը կառուցաներ, քիւրդերը ապշած էին, պահ մը կարծեր են որ հայերը հոն բերդեր կը կառուցանեն և սկսեր են վախնալ (տեղացի տաճիկներն այս գաղափարը ունեցեր են և կըսեն եղեր, թէ մի թէ այս օրս ալ պիտի տեսնէինք որ հայերն բերդեր չլինեն)։ Քիւրդերը յետոյ իրենք ալ սկսեր են ձրիաբար քար կրել և ուրիշ աշխատութիւններ յանձն առնուլ, աղաչելով միանդամայն որ իրենց զաւակներն ալ հոն խրկեն. կարծեմք թէ «Արարատեան» ընկերութիւնը այս փափաքն ի նկատի պիտի առնու և ներկայ շրջանիս մէջ գործադրութեան սկզբնաւորութիւն մը պիտի փորձէ։ Տերսիմի այդ ամուր լեռներն հայոց համար ապագայ ունին, այս կէտը մեր ուշադրութիւնէն պէտք չէ վրիպի. կառավարութեան պաշտօնեայներն միշտ ջանացած են որ հայերն պակսին ատկէց և յաջողած է, մեք պարտիմք քիւրդերն մեզ բարեկամացնելով միասին գործել. Թիւրքիայի մտատանջութիւն է որ Տերսիմ Հայաստանի Զէյթունը չըլլայ. ինչ որ Զէյթուն հոգ կը պատճառէ Թրքաց, այդ բաւական է. չեմք գիտեր թէ տեսաք նոր հրատարակուած Կ ա պ ո յ տ ե տ ե ր ը, որ խիստ կարևոր տեղեկութիւններ կը պարունակէ Զէյթունի հարցի մասին. եթէ «Մասիս» թարգմանէ հետզհետէ կը խրկեմք, իսկ ինչ որ չէ հնար հոս հրատարակել, կը ջանամք թարգմանելով «Մշակի» խրկել։ —Լաւագոյն կը լինի որ իբր թերթոն ամբողջ Կ ա պ ո յ տ ե տ ե ր ը (Blue booch) որ 138 երեսներէ կը բաղկանայ և 129 կտոր կը պարունակէ Զէյթունի կարևոր հարցի վրա, ամբողջապէս «Մշակի» մէջ հրատարակուի։

Սոյն կապոյտ տետրէն կը տեսնուի թէ Անգլիոյ կառավարութիւնը աշխատած է Զէյթունի հարցը յօգուտ հայոց վերջացնելու. երկար բանակցութիւններ տեղի կունենան, Անգլիոյ դեսպանը և պ. Մալէթ, Անգլիոյ Հալէպի հիւպատը ամէնքն ալ խնդրոյն կարևորութիւնը ըմբռնած են, բայց թիւրք կառավարութիւնը միշտ կը դիմադրէ։ Քեամիլ բաշայի վատ գործերն ակներև կը տեսնուին, Սալիզպրի և Լէյարդ կը պնդեն այդ ապիրատին պաշտօնանկութիւնը, Դուռը կը խոստանայ և կը խաղցնէ, Սալիզպրի կը պահանջէ և կը սպառնայ Հալէպի կառավարիչ Քեամիլ բաշայի հարցը մինչև խորհրդարանին ներկայացնել. հազիւ չորս հինգ ամիսների մէջ կարող կը լինի բոլոր իւր զօրութեամբը Անգլիոյ կառավարութիւնը բաշա մը պաշտօնանկ ընելու, և ինչ պաշտօնանկութիւն, Քեամիլ բաշա այսօր ներքին գործոց նախարարին խորհրդականի մեծ պաշտօնը ստանձնած է։—կը տեսնէք թէ թիւրքերն կը համարձակին մինչև իսկ Անգլիոյ հիւպատոսին խրկուած նամակներն առնուլ և վար դնել, որոյ համար Սալիզպրի կը բողոքէ։ Այս նամակներուն մէջ ակներև կը տեսնուին հայոց տառապանքները և իրենց դատին արդարութիւնը. Թերևս անգլիացիք համոզուին թէ Տաճկաստանի մէջ բարեկարգութիւններ ներմուծելն մի անհնարութիւն է, Զէյթուն իրենց օրինակ լինի։

Կապոյտ տետրակին մէջ տակաւին աչքիս չը զարկաւ, թերևս դեռ հանդիպեմ, պ. Զէյմսթափ, որ մասնաւորապէս բարեկարգիչ յանձնաժողովոյ հետ միասին խրկուեցաւ Անգլիոյ կողմէ ի Զէյթուն, հաղորդած այն տեղեկութիւններն թէ «Զէյթունի հարցը, բարեկարգութեանց խնդիր մը չէ, այլ հայ ազգի զարթման առաջին նշանը և ցոյցը. երբ Զէյթուն էի յանկարծ պօլսեցի երիտասարդ մը երևցաւ, քանի մը ժամ կեցաւ և աներևութացաւ, ուսկից եկաւ, ուր գնաց, ինչ ըրաւ չը գիտցանք, միայն ապահով եմք որ կարևոր գործ մը կարգադրեց։ Բ. Դրան համար ամենէն շահաւոր միջոցն այդ հարցը վերջացնելն է գոհացնելով Զէյթունցիները։»

Եթէ Կ. Պոլսոյ մէջ մատնութիւններն, և մերիններուն կողմէ մատնութիւններ, արդելք չը լինէին, թերևս «Մշակի» ընթերցողք շատ աւելի տեղեկութիւններ ստացած լինէին պ. Զէմսայտի յիշատակած երիտասարդին գործոց վրա։

Նոքա որք կը կարծէին թէ Զէյթունի խնդրոց նկատմամբ «Մշակի» մէջ հրատարակուած Կ. Պոլսոյ թղթակցութիւններն ստոյգ լինելէ հեռի են, կրնան Կապոյտ տետրը և այդ թղթակցութիւններն միասին բաղդատել։ Երբ առաջին անգամ «Մշակի» մէջ տեսնուեցաւ Պապիկի անունը իւր գործերն և բանտերը կոխելն, մի թէ շատերն չը խնդացին, սակայն «Tems», «Nouvelle Revue» այդ Պապիկի chevaleresque ածականը տուին և այսօր օտար ոմանք եթէ աւազակապետ կը կոչեն զինքն, դէթ մեք քաջասիրտ հայ զօրական մը ընդունած եմք։

Չեմք գիտեր թէ արդեօք մեր նորանոր դժբաղդութիւններն ալ ազգային զարթման պատճառ պիտի լինին, այլ կերևի թէ Հայաստանի սովը այս կոչումն ունի և պահ մը ցիրուցան հայոց բոլոր ուշադրութիւնը ի Հայաստան կը դրաւէ։ Սովու համար եղած հանգանակութիւններ ցոյցի մը կերպարանք առած են, ամեն հայ Պոլիս այդ նիւթին վրա կը խօսի, ընկերութիւնք կուզեն մասնակցել. Դպրոցասէր Հայուհեաց աղջիկներու ընկերութիւնը իւր աղքատիկ գանձէն մաս կը հանէ, Ազգանուէր հայուհեաց ընկերութիւնը պարահանդէս կը ձեռնարկէ տալ, Օրթագիւղ լսարան կը դրուի, Արարատեանը կը գրէ առ. կեղր. խնամող մասնաժողովն թէ «իր բոլոր բարոյական և նիւթական միջոցներն սովելոց խնամող մասնաժողովոյ իմաստուն տրամադրութեան ներքև կը դնէր։—Իսկ կառավարութեան պաշտօնեայներն ինչ արգելք որ հնար է ի գործ դնել կը դնեն, որպէս զի մեր եղբարց օգնութեան չը հասնեմք։ Հայաստանէ առ կեղր. մասնաժողովն խրկուած հեռագիրներն չեն յանձնէր, ատի հոն խրկուածներ վար կը դնեն կամ կուշացնեն, և դեռ երէկ մեր թերթերն հաղորդեցին թէ 15 օրէ կեղրոնէն առ Վան խրկուած հեռագիրներուն պատասխան չը գար. կառավարութիւնը կառարկէ թէ հեռագիրներն աւրուած են! Սովու միջոցին հեռագիրներն աւրուած է ըսել դէշ միջոց չէ։ Մեր ընդունած ստոյգ տեղեկութիւններն և նամակներն կը հաստատեն թէ երբ Կ. Պոլսէն Վան դրամ գնաց, ամենէն կարօտներուն հացի հետ միասին մի քանի փող բաժնեցին որպէս զի ուրիշ պէտքեր կարենան հոգալ, հազիւ թէ խեղճերը փողը ձեռքերնին առած էին, ահա կառավարութեան զօրքերը վրա կը հասնեն և տուրքերը բռնի պահանջելով, այդ չնչին փողերն աղքատներու ձեռքէն խլելով կառավարութեան մնդուկը կը ձգեն։ Մեք չեմք զարմանար, զի գիտեմք թէ այսպէս միշտ պիտի ընեն, այլ աւելի ցաւալին հայոց ոմանց գաղանութիւնն է որ խեղճ ժողովուրդի թշուառութիւնէն չահ կուզեն հանել, միանալով թրքաց հետ. Վանայ մէջ դարձուածներն գիտեմք. Levant կարինէն հրատարակած նամակի մը մէջ կըսէ թէ տեղական ժողովի անդամներուն մէջ Արապ օղլու տաճիկ մը և Գրիգոր անուամբ հայ մը ցորենի հրապարակը ուղածնուն պէս կը գործածեն և մի քանի հազար ոսկի աւելի շահելու համար ո և է վատ միջոցներու առաջ խոյս չեն տար. դարձեալ Levant կը գրէ թէ Կարնոյ գիւղերու մէջ, երբ գիւղացւոց ձեռքը քիչ մը ստակ անցնի անմիջապէս տեղական իշխանութիւնը զինուոր կը խրկէ և տուրքերը կը պահանջէ, սակայն այս անգամ թիւրք գիւղացիները վռնտեր են այդ զինուորները։

Սովու հետ մէկ տեղ հարստահարութիւններն ալ կը շարունակին, տեղեկագիրներն կուգան և Պատրիարքը Բ. Դրան կը հաղորդէ։ Սեբաստիայէն Ասրայ գայմագամին վրա խիստ բողոքներ կուգան և Պատրիարքը հեռագրով Սեբաստիոյ իշխանութեան բողոքելով, ժողովրդեան արդար դանդատներն նկատողութեան առնուլ պահանջեր է։ Բաղէշի և Մուշի մէջ եղող Մուրկան և Ճապաղջուր գիւղերէն սաստիկ բողոքներ կուգան քիւրդ պէյերու դէմ։ Քղիի գայմագամը, որոյ այնքան պաշտպանութիւն կընէին հայերն, պաշտօնանկ կը լինի, զի քիւրդ պէյերու բարեկամը չէ։

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ԳՕՐԻ, 26 մարտի։ Աւագ քահանայ Տէր-Ստեփանեանց և պ. Գալուստ Ստեփանեանց յայտնում են նուիրատու անձանց, որ Գօրու մէջ կազմած յանձնաժողովը Վանի Հայ սովատանջներին օգնելու համար, մինչև այսօր ժողովել է արդէն 1051 ռուբլ և այսօր այդ գումարից 1000 ռուբլ ուղարկվելու է «Մշակի» խմբագրին, ուր հարկն է հասցնելու համար։ Հանգանակութիւնը շարունակվում է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում մի գրքոյկ պ. Ա. Քիշմիշեանցի—«ԳՐՕՇՕ» և ԿՐԱԿԻ ՇՈՒՐՋԸ» վէպերով: Գրքոյկի գինն է երեսուն կոպ.: Բոլոր արդիւնքը յատկացրած է յօգուտ ՎԱՆԱՅ ՍՈՎԵԼՈՅ:

4—4

Въ Кавказскомъ Обществѣ Сельскаго Хозяйства въ Тифлисѣ имѣется для продажи яички шелковичныхъ червей французской породы, воспитанныя Барономъ Бахомъ, въ окрестностяхъ Тифлиса, по 35 коп. за золотникъ.

Иногородныя обращаются съ требованіями въ Общество съ препровожденіемъ слѣдуемыхъ денегъ, почтовыя расходы на счетъ Общества.

3—3

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է՝ ԳԻՒՄՈՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԻՆԼԻՒՔ-ՅԱԿՈՒԲԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ դոկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, Մուխրանսկու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

7—10

Օրերումս դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում:

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:
2. Դոկտոր Բոկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:
3. Ֆրէյդուն—Տաւիղ յինաղի Տփ. 80 թ. — 30 կ.:
4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:
5. Դամառ-Բաթիպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:
6. Նոյնը կազմած — 25 կ.:
7. Սիլվիո Փէլլիքօի Ֆրանչիսկի (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօնարդիի առ Խտալիան. Տարօնոյ ծերը: Ա. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինը է — 70 կ.:

9—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօխնեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստուածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ОТЪ РАСПОРЯДИТЕЛЬНАГО КОМИТЕТА

Тифлисскаго Благотворительнаго ОБЩЕСТВА

Объявляется, что копѣечный сборъ будутъ производить въ текущемъ великомъ посту по городскимъ участкамъ: въ 1-мъ А. Е. Фролова, во 2-мъ княгиня Е. А. Гагарина и А. И. Руманская, въ 3-мъ О. А. Томичъ и Е. Н. Иванова. въ 4-мъ В. Я. Опочинина (частокъ бывшій княгини С. Я. Святополкъ-Мирской), въ 5-мъ княгиня М. Г. Меликова, въ 6 и 8-мъ княгиня В. Г. Баратова, въ 7-мъ С. П. Красноглядова и О. Н. Чукмасова, въ 6-мъ княгиня О. Д. Барятинская, въ 10-мъ Фон-деръ-Нонне.

Дамы, принявшія на себя трудъ копѣечнаго сбора, будутъ ходить въ сопровожденіи околодочныхъ надзирателей.

На кружкахъ имѣются печатныя надписи на русскомъ, грузинскомъ и армянскомъ языкахъ.

(131) 2—2.

Վաճառվում է նոր հրատարակված «Յիսնաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրօնական գրավաճառանոցներում: Գրքոյկի գինն է 30 կ., դաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է թէ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ և թէ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրավաճառանոցներում և պ. Ծատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Արծրունւոյ: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

4—5

1. Երզնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում: գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատուն նեանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց: Դիֆտերիտ բողազացաւ . . — ր. 25 կ.
4. Բժիշկ. Գ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ:)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ:

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

8—8

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» կանոնադրութիւնը: Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իւր վարչութեան և խմբագրական մասնաժողով:

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մովսէս Թաւադեանին Թիֆլիսի Առևտրական բանկի առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը: Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ՝ պարոն Արգար Յովհաննիսեանին: Վարչութեան ատենադպիր Ա. Քիշմիշեան:

1—10

Փետրվարի 12-ից ԲԱՅՎԵՑ իշխան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) *մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով: Թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով.* СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. *Պատուէրները կը կատարվին ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով: Կօնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:*

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ վկայական ունի և գիտէ ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻԵՐԷՆ և ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները, դասեր է տալիս: Հասցէն Կամենդանտսկայա փողոց, տուն Շախմուրադովի № 23:

3—4 (2)

Տպագրութեան համար պատրաստ է «Գօն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկոտի, «Աբրահամ Լինկօլն՝ ստրուկներին ազատող» Վիլհելմ Հօֆմանի, և Մօլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայ թարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մօլիէրի հետ «Տարտիւֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նօտարական ատոով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվեն ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԹՒԻԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մանաւոր և բանկային վէքսէլներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, նանաւաղեր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ:

Дозволено Цензурою 26 Марта 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона